ՊԱՐԳԵՎ ԲԱՐՍԵՂՅԱՆ

ՄՈԳԱԿԱՆ ՀԱՎԱՏԱԼԻՔՆԵՐԻ ՎԵՐԱՊՐՈՒԿՆԵՐԻ ՇՈՒՐՋ

Նախնադարյան վաղնջական հավատալիքների ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս փաստելու, որ տարրապաշտության, կենդանապաշտության, բուսապաշտության, ոգեպաշտության, երկնքի և նախնիների պաշտամունքի կողքին, հին հայերի մոտ բավականին տարածված են եղել նաև մոգական, հմայական, կախարդական բազմատեսակ գործողություններ, որոնք զարգացման որոշակի աստիճանում թափանցեցին հայոց դիցաբանության ծիսապաշտամունքային զարգացած արարողակարգ, իսկ քրիստոնեության ընդունումից հետո շարունակեցին գոյատևել նոր հավատալիքների կողքին: Այդ հավատալիքների մեծ մասը դարձան հին հայերի առօրյայի անբաժան մասը և հետքրիստոնեական շրջանում, տարատեսակ փոփոխությունների ենթարկվելով, գոյատևեցին մինչև 20-րդ դարասկիզբը, իսկ մի մասն էլ՝ առկա են մինչև օրս: Պահպանված վկայությունները, հայ և օտարազգի տարբեր գիտնականների ուսումնասիրությունները փաստում են, որ մեր նախնիների աշխարհաճանաչողության և աշխարհընկալման գործընթացը ուղեկցվել է ոչ միայն նյութական աշխարհի բազմաթիվ երևույթների, անշունչ առարկաների մտացածին և երևակայական պաշտամունքով, այլև հմայական և կախարդական գործողություններով, որոնց միջոցով հին հայերը փորձել են կապ հաստատել անձնավորված գերբնական ուժերի հետ, ազդել նրանց վրա և հասնել իրենց համար ցանկալի արդյունքի:

Մոգությունը մարդու սնապաշտական տարատեսակ այն գործողություններն են, որոնց միջոցով մարդը փորձել է գերբնական ներգործություն ունենալ որևէ առարկայի կամ երևույթի վրա: Մոգության օգնությամբ մարդիկ ձգտում էին երևակայական կապ հաստատել գերբնական ուժերի, տարաբնույթ բարի և չար բազմաթիվ ոգիների, նախնիների, տոտեմների և ֆետիշների հետ: Առաջանալով անհիշելի ժամանակներում մոգությունը շարունակեց զարգանալ հազարամյակների ընթացքում: Կարելի է վստահորեն պնդել, որ, առանց բացառության, ժամանակակից բոլոր կրոններում մոգության հետքերն առկա են, և որ դրանք մեծ ազդեցություն են ունեցել այդ կրոնների ծիսապաշտամունքային արարողությունների ձևավորման վրա: Փոխներթափանցման այդ երևույթները պայմանավորված են հատկապես այն հանգամանքով, որ հավատացյալների լայն զանգվածների համար կրոնական պրակտիկայում հատկապես կարևորվում է գերբնականի հետ, թեկուզև երևակայական, կապի

հաստատումը կամ հարաբերվելը, որի արդյունքում հավատացյալը ակնկալում է կրոնի մոգական ներգործությունը իր առօրյա կյանքի վրա:

Նախնադարյան հասարակարգում մոգական գործողությունները հիմնականում պարզունակ էին, առօրեական և կենցաղային նշանակություն ունեին: Այդ գործողությունների հիմնական նպատակը նախամարդու կողմից պաշտամունքի արժանացած և գերբնական հատկանիշներով օժտված առարկայական, կենդանական, բուսական աշխարհի ներկայացուցիչների և տարատեսակ բարի և չար ոգիների վրա ներգործելն ու այդ ճանապարհով իրական կյանքում ցանկալի արդյունքի հասնելն էր: Քանի որ նախամարդն իրեն դեռևս չէր անջատել շրջապատից և իրեն համարում էր բնության անբաժան մասնիկը, ապա մոգական գործողությունների հիմնական իմաստը և նպատակը կյանքի տարբեր ոլորտների և հասարակական հարաբերությունների կարգավորումն էր:

Դատելով հայկական ժայռապատկերներից վստահորեն կարելի է պնդել, որ նախնադարյան Հայաստանի բնիկները արձանագրել են իրենց, շրջապատող առարկայական աշխարհի և կենդանիների միջև փոխհարաբերությունները, նմանակել են որոշակի երևույթներ, պատկերել որսի տեսարաններ, որոնք ակնհայտորեն իրենց մեջ ներառում են հմայական, մոգական գործողությունների ընդգծված տարրեր: Հետագա դարերի ընթացքում, անցում կատարելով զարգացման ավելի բարձր աստիճանի, մեր նախնիներն իրենց համար անբացատրելի և գերբնական հատկություններով օժտված միջավայրի տարատեսակ երևույթների հետ շփվելու համար կյանքի կոչեցին մոգական գործողությունները և մշակեցին բնության ու հասարակական կյանքի երևույթների վրա «ներգործելու» բազմազան միջոցներ, եղանակներ, հմայական գործողություններ, ծեսեր և արարողություններ, կախարդություններ, աղոթքներ և անեծքներ, հարցուկներ և գուշակություններ: Դարերի ընթացքում տարբեր ֆետիշների, տոտեմների և ոգիների վրա ազդելու, նրանց վնասակար ազդեցությունից զերծ մնալու և նրանց հաղթելու համար ձևավորվել էր մոգական գործողությունների և հավատալիքների մի ողջ համակարգ, որոնցով զբաղվում էին կախարդության, հմայության և մոգության բազմաբնույթ գաղտնիքներին տեղյակ մարդիկ:

Մեզ են հասել բազմաթիվ հիշատակություններ, ըստ որոնց, մինչև 20-րդ դարի սկիզբը հայկական գյուղերում շարունակում էին գոյատևել սնապաշտական հավատալիքներ, որոնք գալիս էին հեթանոսական շրջանից: Այդ հավատալիքների մի ստվար մասը կամ հին ժամանակներից եկող մոգական գործողությունների փոփոխված և զարգացած տարբերակներն էին, կամ էլ քրիստոնեական, իսլամական և այլ հավատալիքների նմանատիպ գործողությունների և հին հավատալիքների համադրումը իրենց յուրահատուկ կողմերով, առանձնահատկություններով, նորովի մեկնաբանություններով ու դրսևորումներով: Այդ ամենը վկայում են, որ պաշտամունքային-ծիսական արարողու-

թյունները և տարատեսակ մոգական գործողությունները կազմել են հին հայերի հեթանոսական հավատալիքների անբաժանելի մասը, որի մասին հիշատակությունները բավականին շատ են հայ և օտար պատմիչների մոտ:

Հեթանոսական շրջանին վերաբերող մոգական գործողությունների վերաբերյալ առաջին հիշատակությունները հանդիպում են դեռևս 5-րդ դարի հայ պատմիչների Մովսես Խորենացու, Եզնիկ Կողբացու, Ագաթանգեղոսի և այլոց աշխատություններում: Այդ հիշատակություններից առաջին հերթին ուշադրության են արժանի նախնադարյան հավատալիքներին առնչվող ծիսապաշտամունքային արարողությունները, հմայությունները և կախարդական գործողությունները: Ընդ որում, այդ հիշատակությունների արձանագրման շրջանում դրանց մի մասն արդեն թափանցել էին քրիստոնեական ծիսական համակարգ, կամ էլ ուղղակի շարունակում էին գոյատևել քրիստոնեական ծիսական արարողություններին զուգընթաց, որի պատճառով արժանանում էին քրիստոնյա պատմիչների քննադատությանը: Այսպես, Եզնիկ Կողբացին ծաղրում է արեգակի, լուսնի, կրակի, օդի, հողի և ջրի պաշտամունքի հետ կապված հին հայերի սնահավատությունը և, հակադրվելով դրանց, վերջիններիս գոյությունը կապում է աստվածային արարչագործության հետ:[1]

Հովհան Մանդակունին, արտահայտվելով իր ժամանակի հմայական գործողությունների դեմ, հիշատակում է մոգական գործողությունների հետևյալ տարատեսակները. *«Դիւթութիւն. Թռչչութիւն. Հատահարցութիւն. Հաւահմայութիւն. Մաղաբախութիւն. Քուահարցութիւն. Հեղահարութիւն. Հմայութիւն. Միջագիտութիւն. Գրարարութիւն. Աստեղագիտութիւն. Դիւահարցութիւն. Օրահմայք. Լուսնախտիրք. Շեղջախտիրք. Գեղահմայք. Սնոիկոնք. Յուռութք. Բախտ. ճակատագիր. Գիր Պահարանի. Շարժմակք բժժանաց.»*[2]: Ըստ Դ. Ալիշանի, Հովհան Մանդակունին այս շարքում չի նշում ընդհանուր ճանաչում գտած «կախարդություն» տերմինը, այն հասարում է նշված բոլոր մոլորությունների ընդհանուր անվանումը և նույնացնում հմայության կամ դյութության հետ: Մոգական գործողությունների Մանդակունու նշած տարատեսակների մի մասն իրենց գոյությունը պահպանել էին մինչև 20-րդ դարի սկիզբը, իսկ մի մասն էլ գոյություն ունեն մինչ օրս: Այսօր էլ, ինչպես դարեր առաջ, մեր հասարակության մեջ ապրում են մարդիկ, ովքեր զբաղվում են հմայական, կախարդական գործողություններով, որոնց հավատում և «ծառայություններից» օգտվում են բավականին մեծ թվով մարդիկ:

Հայոց զարգացած հեթանոսական կրոնում մոգական գործառույթներն իրականացնում էին քրմերը, որոնք կանոնակարգում էին մոգական գործողությունները և իրականացնում այս կամ այն աստծուն նվիրված կամ

---

[1] Սանրասմամն տե՛ս Եզնիկ Կողբացի, Եղծ Աղանդոց, Երևան, 1970, էջ 36:
[2] Ղևոնդ Ալիշան, Հին հաւատք կամ հեթանոսական կրօնք հայոց, Վենետիկ, 1895, էջ 364:

գերբնական ուժերի հետ հարաբերվելուն ուղղված ծիսապաշտամունքային սարարողությունները: Այսպես, ըստ Մովսես Խորենացու Արմավիրում տնկված սոսիների անտառի հետ էին կապվում գուշակությունների բավականին հետաքրքիր մոգական գործողություններ, որտեղ հանդիպում ենք նաև տոտեմի (սոսի) և ֆետիշի (քամի) պաշտամունքի. *«...Արայան Արան պատերազմի մեջ մեռնում է Շամիրամի հետ, թողնելով արու զավակ՝ գործով հզոր, խոսքով հանճարեղ Անուշավան Սոսանվերին, որովհետև նա (կրոնական) պաշտամունքի համաձայն նվիրված էր Արամանյակի սոսի ծառերին Արմավիր քաղաքում, որոնց տերևների հանդարտ կամ սաստիկ շարժվելուց, նայելով քամու ուժին և ուղղությանը մեր Հայոց աշխարհում սովոր էին գուշակություններ անել երկար ժամանակ»*[3]: Մեկ այլ տեղում Խորենացին հիշատակում է, որ Երվանդ արքան *«...հմայքով չար աչք ուներ, որի պատճառով արքունի սպասավորները սովորություն են ունեցել առավոտն արշալույսը բացվելիս որձաքար քարեր բռնել Երվանդի առաջ, որի հայացքի չարությունից այդ որձաքարերը, ասում են, պայթելիս են եղել»*[4]:

Հեթանոսական Հայաստանում մոգական գործողություններն իրականացնող հոգևոր դասի ներկայացուցիչների քրմերի իշխանությունը փոխանցվում էր ժառանգաբար: Խորենացու հիշատակած Անուշավանը հավանաբար եղել է Արմավիրի սոսյաց անտառների քուրմը: Պատմահայրը հայտնում է նաև, որ Երվանդ արքայի եղբայր Երվազը քրմապետ է եղել Բագարանում,[5] Արտաշես արքայի որդի Մաժանը՝ Անհում Արամազդի տաճարում,[6] իսկ Վահագնին նվիրված մեհյաններում քրմություն էին անում Վահունի նախարարական տան ներկայացուցիչները: Հեթանոսական Հայաստանում մոգական որոշակի գործառույթներ էին վերագրվում մի շարք աստվածների: Մոգության գլխավոր հովանավորը Տիրն էր: Նրան անվանում էին *«քրմական գիտության դպիր»*, *«երազագույց»*, *«երազահաս»* պաշտամունքի Տիր աստված, որի մեհյանում ուսուցանում էին նաև ճարտարություն:[7] Մոգական գործողությունների հետ անմիջականորեն կապ ունեցող բժշկությունը հովանավորում էր Անահիտ աստվածուհին, որից բժշկություն էին խնդրում նույնիսկ արքաները: Երբ Արտաշես արքան հիվանդանում է, Աբեղյանների տոհմից ոմն Աբեղոյի ուղարկում է Եկեղյաց գավառ *«Երիզա, Արտեմիսի (իմա Անահիտի) մեհյանը, որպեսզի կուռքերից բժշկություն խնդրե (թագավորի համար)...»*[8]:

---

[3] Մովսես Խորենացի,Հայոց պատմություն, Երևան, 1990, էջ 40:
[4] Նույն տեղում, էջ 107:
[5] Նույն տեղում, էջ 106:
[6] Նույն տեղում, էջ 119:
[7] Ազաթանգեղոս, Պատմություն Հայոց, Երևան, 1977, էջ 120:
[8] Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, էջ 123:

Հեթանոսական ծիսապաշտամունքային արարողություններն իրականացնող քրմերի հեղինակությունն ու իշխանությունն այնքան մեծ էր, որ դրա հետ հաշվի նստեց նաև Գրիգոր Լուսավորիչը, որը նոր կառուցված մի շարք եկեղեցիներում հոգևոր սպասավորությունը հանձնեց հեթանոսական քրմերին կամ նրանց ժառանգներին: Ագաթանգեղոսի հունարեն թարգմանության մեջ հանդիպում ենք տողերի, որոնք հաստատում են վերը նշվածը. *«Սուրբ Գրիգորը, կործանելով տաճարները, առաջարկեց Տրդատ թագավորին քրիստոնյա դարձնել քրմերին.... (Քրմերը) միաբան լինելով փութացին կատարյալ (հավատքն) ընդունել, փրկվելով կռապաշտության մոլորությունից...»*[9]: Մեր կարծիքով Գրիգոր Լուսավորչի այս քայլը հեռահար քաղաքական և կրոնական նպատակ էր հետապնդում: Նախ, քրմական դասը բավականին հզոր էր և բազմաթիվ վայրերում զինված դիմադրություն էր ցույց տալիս քրիստոնեությանը, ուստի նրանց իշխանության պահպանումը կարող էր թուլացնել հեթանոսության դիրքերը: Եվ, երկրորդ, Լուսավորչին ձեռնտու էր նոր ձևավորվող հոգևոր դասում ընդգրկել քրմական կրթված (թեկուզև հեթանոսական կրթությամբ) դասին, քանի որ հեթանոսական Հայաստանում կրթությունը հիմնականում կենտրոնացած էր մեհյաններում: Ասվածի վկայությունն է նաև այն, որ հետագայում, 4-րդ դարի կեսերին, Հայ Առաքելական եկեղեցու հոգևոր դասի ներկայացուցիչների մեջ, Լուսավորչի ազդեցիկ տոհմից հետո, իր հեղինակությամբ աչքի էր ընկնում Աղբիանոսյան (նախկին քրմական) տոհմը, որի ներկայացուցչին Պապ թագավորը Ներսես Մեծի մահից հետո դարձրեց կաթողիկոս:

Հեթանոսական հավատալիքներում առկա տարատեսակ մոգական գործողությունների ազդեցությունը հայ իրականության մեջ պահպանվեց երկար ժամանակ և հանդես եկավ հին հավատալիքների վերապրուկների տեսքով, որոնց կանդրադառնանք ստորև:

19-րդ դարավերջին և 20-րդ դարի սկզբին տարբեր բանահավաքների և գիտնականների կողմից գրի առնված բանահյուսական ժանրի ստեղծագործությունների և պահպանված ավանդությունների ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս փաստել, որ 20-րդ դարի սկզբին հայկական բնակավայրերում պահպանվել էին բազմաթիվ հավատալիքներ, որոնք կազմում էին ժողովրդի առօրյայի անբաժան մասը: Այդ հավատալիքների զգալի մասն էին կազմում մոգական գործողությունները, որոնք գոյություն ունեին քրիստոնեական հավատալիքների հետ կողք կողքի և իրականացվում էին քրիստոնեական ծիսապաշտամունքային արարողություններին զուգահեռ: Մեր նախնիները, ապրելով իրենց կողմից պաշտամունքի արժանացրած և «գերբնական» որոշակի հատկություններով օժտված առարկաների, իրերի ու երևակայական

---

[9] Ագաթանգեղոս, Պատմություն Հայոց, Ծանոթագրություններ, էջ 175:

ոգիների կողքին, հնարագիտությամբ և ինքնապահպանական բնազդով ստեղծել էին որոշակի հակազդող միջոցներ, որոնցից էին տարբեր սրբերի մասունքները, կախարդությունը և հմայությունը, թալիսմանները և տարատեսակ թղթերը, հուռութքը, բժժանքը և այլն: Այս միջոցներն օգտագործվում էին գերբնականի հետ հարաբերվելու և նրա վրա ներգործելու համար: Սոգական գործողությունների մի մասն անմիջականորեն կապված էր երևակայական գերբնական հատկություններով օժտված առարկայական աշխարհի պաշտամունքի հետ: Տարբեր քարերի վերագրվում էին բուժիչ հատկություններ, այսպես, Բուլանըխում *«Գերեզմանոցներում գտնվող ծակ քարերի միջով անց էին կացնում այն երեխաներին, որոնք կապույտ հազով էին հիվանդանում»*[10]: Բուժիչ հատկություններ էին վերագրվում նաև Հայաստանի տաբեր վայրերում հայտնի «կաթնաղբյուրներին», ծառերին, բույսերին և այլն: Կաթնաղբյուրների և դրանց մոտ գտնվող սրբերի մատուռների կամ եկեղեցիների բուժիչ հատկությունների և գերբնական ուժի զորության մասին հավատը կա նաև այսօր, Հայաստանի տարբեր վայրերում գտնվող ուխտատեղիներում: 20-րդ դարասկզբին կային կաթնաղբյուրներ, որոնց վերագրում էին հրաշագործ մեկ այլ հատկություն ևս: Արևմտյան Հայաստանի տարածքում, Դերսիմի սանջակի Հալիվորի Ս. Կարապետ վանքի կաթնաղբյուրը բխում էր երկու տեղից: Այստեղ ուխտի եկող հավատացյալները արևելյան կողմի աղբյուրը կոչում էին արու, իսկ արևմտյան կողմինը էգ: Արու զավակ ցանկացող կանայք խմում էին արևելյան աղբյուրից, իսկ աղջիկ ցանկացողները արևմտյանից: Հատկանշական է, որ արու և էգ այս կենսատու աղբյուրները կոչվում էին Արեգի աղբյուրներ, որն, ըստ ժողովրդական ստուգաբանության, արու և էգ բառերի կրճատ ձևն էր[11]: Մեր համոզմամբ Արեգ անվան այս ստուգաբանությունը դարերի ընթացքում մթագնել է նախնական պաշտամունքը, և այս աղբյուրների կենսատու սկզբունքը հավանաբար կապված է եղել արևի պաշտամունքի հետ: 20-րդ դարասկզբին հայերի սնապաշտական գիտակցության կողմից գերբնական հատկություններ էին վերագրվում նաև Արևմտյան Հայաստանի տարածքում գտնվող առանձին պուրակների, որոնք, ինչպես հնադարյան Հայաստանի «Սոսյաց» կամ «Ծննդոց» անտառները, համարվում էին սուրբ և գերբնական: Բուլանըխում *«...ծառաստանը գտնվում էր Նազուկա (Նազիկ) լճի ափին, ս. Հովհաննես կոչված ավերակ վանքի շուրջը, ուր ուխտի են գնում և ինչպես այստեղ, նույնպես ամեն մի ուխտավայրում իրենց հանդերձի քուրջերից մի կտոր կտրելով փաթաթում են սրբացած ծառերի ծյուղերին իրենց ցավն ու չորը այնտեղ թողնելու համար»*.[12] Սուրբ ծառը, երբ չորանում էր,

---

[10] Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ. 3, Երևան, 1972, էջ 50:
[11] Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ. 5, Երևան, 1973, էջ 41:
[12] Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ. 3, էջ 51:

նրա փտած փայտն օգտագործում էին իբրև դեղամիջոց: Համարվում էր նաև, որ ծառերը բուժում էին նաև կենդանիներին. *«հիվանդ անասունին երեք անգամ պտտում են սուրբ ծառի շուրջը, կոտրում են գավազանը և թողնում ծառի մոտ»*[13].

Մեծ թվով հիշատակություններ են պահպանվել պաշտամունքի արժանացած տարբեր բույսերի և նրանց հետ կապված մոգական հավատալիքների մասին երեքնուկը գցում էին պանրի դեղջրի մեջ, որ չար աչք չբռնի և պանիրը չփչանա, կուժ-կոտրուկի ծաղիկ քաղելն արգելվում էր, որ խեցե ամանները չկոտրվեին (ի դեպ, այս հավատալիքը պահպանվել է մինչև մեր օրերը), լոշտակը կամ մարդատակը քաղելն արգելվում էր, որովհետև հավատացած էին, որ այս բույսի արմատը հանելիս այն ճիչ էր արձակում և լսողին անմիջապես մահացնում, *«ուստի դրա արմատը թելով կապելիս են եղել քաղցած շան վզին և հեռվից հաց են ցույց տվել, շունը կտրել հանել է արմատը բայց սատկել է»*[14]. Նույն լոշտակի պտուղներն ու արմատները համարվում էին կախարդական գավազան, որը մարդկանց և կենդանիներին իմաստնություն էր տալիս[15]. Հարկ է նշել, որ ծակ քարերի, հրաշագործ ծառերի ու բույսերի պաշտամունքի վերապրուկները այսօր էլ տարածված են Հայաստանի բազմաթիվ բնակավայրերում:

Հատկապես ուշադրության են արժանի 20-րդ դարասկզբին պահպանված մոգական գործողությունների այն վերապրուկները, որոնք ուղղված էին երևակայական չար ոգիների, դևերի, չարքերի, սատանաների, վիշապների և վնասակար մի շարք այլ էակների դեմ: Այդ գործողություններից մի քանիսը հանդես էին գալիս հմայական աղոթքների տեսքով, իսկ մի մասն էլ չար ուժերի դեմ ուղղված պրակտիկ գործողություններ էին, որոնց ժամանակ օգտագործվում էին չարը հալածող տարատեսակ նյութական երևույթներ: Հմայական աղոթքները Հովհան Մանդակունու հիշատակած դյութությունն ու թվչությունն էին, այսինքն խոսքերով, շշնջալով, երբեմն անիմաստ բառեր արտահայտելով կամ թոթվելով ոգիների վրա ազդելով ցանկալի արդյունքի հասնելու կամ անցանկալի որևէ երևույթից խուսափելու սնապաշտ հավատքը: Մոգական այդ գործողություններում մեծ տեղ էր հատկացվում խոսքի մոգական ուժին և զորությանը: Դրա առավել տարածված տեսակներն էին բազմաթիվ աղոթքները, որոնց մի մասն ուղղակի հնչում էին բանավոր, իսկ մի մասն էլ գրավոր էին և հայտնի էին միայն դյութությամբ զբաղվող մարդկանց: Աղոթքները ձևավորվել էին հարյուրամյակների ընթացքում և արտացոլում էին հին հայերի առօրյա գործունեության մեջ մեծ տեղ հատկացվող երևակայական ոգիների հետ հարա-

---

[13] Մանուկ Աբեղյան, Երկեր, հ. է, Երևան, 1975, էջ 53:
[14] Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ. 3, էջ 51:
[15] Մանուկ Աբեղյան, Երկեր, հ. է, էջ 54:

բերությունները, այդ թվում նաև դրանց դեմ պայքարի բազմազան ձևեր, որոնց հիմնական նպատակը այս կամ այն ոգու կամ գերբնական ուժի վրա ներգործելն ու նրանից պաշտպանվելն էր:

Մեզ են հասել բազմաթիվ չարահալած աղոթքներ, որոնք արտաբերող մեր նախնիները հավատացած էին, որ դրանք անպայման ներգործություն են ունենում չարը մարմնավորող չարքերի, դևերի, վնասատու կենդանիների կամ նյութական այլ չար դրսևորումների վրա և իրենց ազատում են նրանց վնասակար ազդեցությունից: Այսօր էլ մեր իրականության մեջ, ինչպես դարեր առաջ, կա չար աչքի մասին հավատալիքը և պահպանվել է «աչքով տալ» արտահայտությունը: Շատերը հավատացած են, որ որոշ մարդիկ օժտված են չար աչքով և իրենց գործունեությամբ կարող են վնասակար ազդեցություն ունենալ դիմացինի վրա: Չար աչքի դեմ պայքարի ձևերը բազմազան էին, որոնցից 19-րդ դարում հայտնի մի հմայական աղոթք հիշատակում է Ղ. Ալիշանը: Չար աչքի դեմ պայքարի հիմնական միջոցը այս աղոթքում փուչն է, որին նվիրված մոգական գործողության դրսևորումները պահպանվել նաև մեր օրերում. *«Չարակն ի չար փուշն. չար փուշն ի բարկ կրակն. բարկ կրակն ի քարն. քարն ի յանմաստակ ծովն. ամենայն չար աչք և չար լեզուաւ չար խորհուրդ և չար զգայարանքն պատառի և խաւար դառնայ ի դիմաց ծառայիս Աստուծոյ»* (ընդգծումը մերն է- Պ.Բ.): Այս աղոթքի նախնական տարբերակը, մեր կարծիքով, եղել է առանց ընդգծված հատվածի, որն ակնհայտորեն քրիստոնեական շրջանի լրացում է: Աղոթքի նախնական տարբերակում, հավանաբար, հիշատակվել են միայն չարահալած հատկություններով օժտված փուշը, կրակը, քարը և ծովը: Հարկ է նշել նաև, որ չարը հալածող փուշը այսօր շատ վարորդներ կախում են իրենց մեքենաների մեջ՝ հավատալով, որ դրա արդյունքում չար աչքը իրենց չի կպչի: Չար աչքը հալածելու մեկ այլ միջոցի քարի ուժին մենք հանդիպում ենք դեռևս հնադարում և արդեն նշել ենք Երվանդ արքայի մասին Խորենացու հիշատակությունը: Չար աչքը հալածող մեկ այլ հմայական աղոթք է.

«Խաժ աչքի աչքը ճաքի,
Մև աչքի աչքը ճաքի»[16]:

Հմայական աղոթքներից հիշարժան են նաև գայլի, որպես վնասակար և չարը մարմնավորող կենդանու դեմ ուղղված աղոթքները: Այդ աղոթքները կոչվում են գայլակապի աղոթքներ և իրենց վրա կրում են քրիստոնեության ազդեցությունը.

« Որդի Գալուստին
Հովիվ էր Քրիստոսին.
Նստեր օխտը ճամփին,
Կը լար, կ՛ողբար:

---

[16] Սասնուկ Աբեղյան, Երկեր, հ. է, էջ 101:

-Հե՞ր լաս, հե՞ր ողբաս,-
Հարցուց Նրան Քրիստոս:
-Ի՛մ տեր, կը լամ, կ՚ողբամ,
Կը վախեմ գելից-գազանից,
Եվ ամենայն ջանավարից,
Որ ժուռ կը գան մեք գիշերին:
-Գնա, մտիր սուրբ Սիմեոնին,
Առ երկաթ գնջիլ, պողպատ բալնիք,
Դիր գողն ի ոտնին, գելն ի բերան,
Եվ ամենայն ջանավարին,
Որ ժուռ կը գան մեք գիշերին».[17]

Այս և պահպանված այլ աղոթքներում և սնապաշտական հավատալիքներում չարի դեմ պայքարի հիմնական միջոցներ էին համարվում և «գերբնական» հատկություններով էին օժտված փուշը, կրակը, երկաթը կամ պողպատը: Երկաթը պահպանում էր մարդկանց չար դևերից, ալքերից և սատանաներից: Մի հմայական աղոթքում քրիստոնեական անուններով հանդես եկող պահապանների կողքին տեսնում ենք նաև երկաթի կամ պողպատի պահպանող հատկությունները.

« Մեր տուն տիրոջ տուն է,
Պատերն հրմեն էրկաթ է,
Սներ հրմեն պողպատ է,
Քրիստոս (կամ մեկ ուրիշը) դռան պահապան է,
Թուր դռան գոց է,
Սուրբ Օհան (կամ մեկ ուրիշը) էրթիկն է,
Խալխան էրթկին ամրոց է,
Դռան գալող ետ դառնա,
Երթիկ գալող քար դառնա:
-Աքա Մարիամ, հոտ ի՞նչ կէնես...
«Իրեք պուռ դանակմ ունիմ.
Մեկը սուտ սատանին.
Մեկը գել գազանին.
Մեկն ա չար խափանին».[18]

Հարկ է նշել, որ երկաթի չարահալած զորության մասին հավատալիքը պահպանվել և հասել է մինչև մեր օրերը, և այսօր Հայաստանի գյուղական վայրերում կարելի է հանդիպել տարեց կանանց, ովքեր չար աչքից կամ սատանայից ու դևից պաշտպանվելու համար կրում են պողպատե զարդեր՝ մատանիներ, քորոցներ, ականջօղեր և այլն: Երկաթի գերբնական հատկությունների լուսագույն ապացույցն է նաև այսօր շատերի կողմից տների մուտքի դռներին ամրացվող երկաթե պայտերը:

---

[17] Սանուկ Աբեղյան, Երկեր, հ. Ա, Երևան, 1966, էջ 34:
[18] Սանուկ Աբեղյան, Երկեր, հ. է, էջ 34:

Մոգության պահպանված վերապրուկներից հիշատակության են արժանի նաև հոգիների և ննջեցյալների պաշտամունքի հետ անմիջականորեն առնչվող գործողությունները: Հայկական ժողովրդական հավատալիքներում հոգիների պաշտամունքը և նրանց հետմահու գոյության հավատքը անմիջականորեն կապվում է անդրշիրիմյան աշխարհի վերաբերյալ պատկերացումների հետ: Հեթանոսական Հայաստանում անդրշիրիմյան կյանքի հիմնական գործառույթներն իրականացնում էր Սանդարամետ աստվածը, որի անունը հետագայում, հետքրիստոնեական շրջանում, նույնացավ դժոխք հասկացության հետ և միջնադարյան ձեռագրերում դարձավ դժոխքի հոմանիշ: 20-րդ դարասկզբին պահպանված հավատալիքներում շատերը հավատում էին, որ *«Մեռնելիս հոգին բերանից դուրս է գալիս և մարմնից անջատ, անտեսանելի շարունակում իր կյանքը»*:[19] Երբեմն հոգին հանդես էր գալիս նյութական կերպարանքով, ընդունում թռչնի, կենդանու կերպարանք, իսկ երբեմն էլ հանդես էր գալիս ուրվականի կերպարանքով և ունենում չար ազդեցություն: Այդ ուրվականները հանդես էին գալիս տարբեր կենդանիների (շուն, գայլ, արջ և այլն) տեսքով և կարող էին վնաս պատճառել ճամփորդներին: Համարվում էր նաև, որ դրանց վախից մարդիկ հիվանդանում էին: Ուրվականի համարում ունեին նաև թուրքերը, չապաշխարած մեղավորները, չարագործները և ինքնասպանները[20]: Ուրվականների վերաբերյալ հավատալիքը անմիջականորեն առնչվում էր գերեզմանների մասին սնապաշտական այն հավատալիքի հետ, համաձայն որի դրանք այդ ուրվականների հիմնական բնակավայրերն էին: Այդ ամենին զուգընթաց համարվում էր նաև, որ մարդկանց մահը և «այն աշխարհ» տեղափոխվելը հոի էր մի շարք վնասակար հետևանքներով: Այսպես, մոգական պատկերացումներից մեկի համաձայն, երբ *«...մեկը մի ընտանիքում հիվանդանում է ընտանիքի մի անդամի, հատկապես շատ անաշխատունակ, զառամյալ ծերունու մահվանից անմիջապես հետո, ծերունի, որի հետ լավ չեն վարվել, կսրծում են, թե հիվանդություն հարուցողը հանգուցյալն է, և նա չի հանգստանա, մինչև որ ընտանիքի անդամներից մեկից մինչև յոթ հոգի իր ետևից չտանի: Ուստի բացում են նրա գերեզմանը, գլուխը մարմնից բաժանում, ինչպես անում են վերադարձող ուրվականների հետ, գլուխը ջարդում կամ սրտի ու գլխի մեջ մեխ խրում: Նույնիսկ մեռելի սրտից մի կտոր են կտրում ու հիվանդին տալիս, որ ջրով կուլ տա ու բուժվի»*.[21] Մարմնից բաժանված հոգիների վերաբերյալ վախը բավականին արմատավորված էր, և նրանց նակատմամբ կիրառվող մոգական գործողությունները հանդես էին գալիս ոչ միայն պրակտիկ, այլև հմայական աղոթքների կամ անեծքների տեսքով:

---

[19] Նույն տեղում, էջ 17:
[20] Նույն տեղում, էջ 18:
[21] Նույն տեղում, էջ 18:

Պրակտիկ մոգական գործողության հետաքրքիր նմուշ է այն, որ հանգուցյալի անցանկալի այցելություններից զերծ մնալու համար երբեմն նրա ոտքերի մատները թելով կապում էին միմյանց, հավատացած լինելով, որ դրանով նրան զրկում են շարժվելու հնարավորությունից:

Մոգական պրակտիկ գործողությունները, որոնց հիմնական նպատակը հանգուցյալների դեմ պայքարն էր, երբեմն փոխարինվում էր այնպիսի գործողություններով, որոնց նպատակը հանգուցյալներին օգնելը կամ, եթե վախենում էին, սիրաշահելն էր: Պահպանված մի սովորության համաձայն, հանգուցյալի մայրն ամեն կիրակնամուտին ջուր չէր խմում, որպեսզի այդ ջուրն «այն աշխարհում» տան իր որդուն ծարավը հագեցնելու համար[22]: Ընդհանրապես այն հավատալիքը, որ անդրշիրիմյան աշխարհում ննջեցյալները շարունակում են ապրել և կարիք ունեն նաև սննդի, բավականին հին է և հայտնի է շատ ժողովուրդների հեթանոսական հավատալիքներում: Այսօր պահպանված մոգական գործողության մի վերապրուկ է այն հավատալիքը, որ հանգուցյալը «այն աշխարհում» սննդի կարիք ունի և Հայաստանի շատ վայրերում ննջեցյալի գերեզմանին այցի գնալիս այնտեղ սնունդ են թողնում: Այս հավատալիքը նաև կապված է նախնիների պաշտամունքի հետ, որի վերապրուկները այսօր ներթափանցել են քրիստոնեական տոնածիսական համակարգ և քրիստոնեական տաղավար տոներին հաջորդող օրը առանձին նշվում է ննջեցյալների հիշատակը, որի ժամանակ հանգուցյալների հարազատները խունկ են ծխեցնում նրանց գերեզմանների վրա:

Բերված փաստերը և հիշատակությունները մեկ անգամ ևս հավաստում են այն իրողությունը, որ մինչև օրս, հայ ժողովրդի կենցաղը, առօրյան, հոգևոր գործունեությունը, քրիստոնեական դավանանքին զուգահեռ, ուղեկցվում են ժողովրդական մի շարք սնապաշտական հավատալիքներով, այդ թվում մոգական, հմայական և կախարդական գործողություններով: Այսօր էլ շատերի համար օբյեկտիվ աշխարհի և քրիստոնեական հավատալիքների կողքին շարունակում են գոյատևել նախնադարից եկող և զարգացում ապրած տարատեսակ հավատալիքներ, և հայ ժողովրդի մի ստվար զանգված, ավանդույթի և սովորության ուժով շարունակում է իր առօրյան լցնել երևակայական ոգիներով, մտացածին էակներով, պաշտամունքի արժանացած առարկաներով, իրերով և իրականացնում է դրանց հետ հարաբերվելուն ուղղված տարբեր գործողություններ, հավատում է թալիսմանների, հմայիլների, գուշակությունների գերբնական զորությանը և մոգական գործողություններով զբաղվող մարդկանց:

---

[22] Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ. 3, էջ 40: